

Բանալի բառեր՝ բանկ, միջազգային, վերահսկողություն, ծառայություն, ֆինանսական, կազմակերպություն:

ՀՏԴ 336.71

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Վտենախոսության թեմա՝
Բանկային գործունեության միջազգայնացման
ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա
(Հայաստանի օրինակով)

Վարդան ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

Գիտական դեկավար՝
Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հաճախորդների շահերից ելնելով, միջազգային բանկային գործունեությունը տեղավորվում է «Առևտրի համաշխարհային կազմակերպության» (ԱՀԿ) մեջ մտնող ծառայությունների միջազգային առևտրի համակարգի մեջ: Առևտրի այդ ձևերը թվարկված են ԱՀԿ հիմնական փաստաթղթում, որը կարգավորում է երկրների համագործակցությունը ծառայությունների ոլորտում, այն է՝ «Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրում» (ԾԱԳՀ-GATS): Այն ներառում է՝

- Ծառայությունների անդրասահմանային առևտուր,
- Արտերկրում ծառայությունների սպառում,
- Առևտրային ներկայություն,
- Մասնագետների մեկնում:

Միջազգային բանկային բիզնեսում ծառայությունների անդրասահմանային առևտուրը տեղի ունի առանց արտերկրում բանկային օֆիսների բացման միջազգային վարկավորման: Միջազգային բանկային հաշվարկները, դեպքերի մեծ մասով, նույնպես հանդիսանում են անդրազգային առևտրի օրինակներ: Ծառայությունների սպառումը արտերկրում նույնպես չի նախատեսում այդ երկրում բանկային հաստատությունների բացում: Արտերկրում բանկային ծառայությունների սպառման վառ օրինակներն են՝ տեղական բանկերի կողմից օտարերկրյա ընկերությունների սպասարկումը, և արտասահմանցի զբոսաշրջիկների կողմից պլաստիկ քարտերի օգտագործումը վճարման կամ փողի կանխիկացման համար: Բանկերի առջև ամենալայն հնարավորությունները բացվում են արտերկրում բանկային գրասենյակների բացումով, հենց սա է նշանակում բանկային ծառայությունների արտերկրյա շուկաներում առևտրային ներկայություն: Միջազգային բանկային բիզնեսում ավելի հազվադեպ է տեղի ունենում մեկ երկրի բանկի մասնագետի մեկնումը այլ երկրի բանկ, խորհրդավական կամ այլ ծառայություններ մատուցելու նպատակով:

Միջազգային բանկերի ծառայությունների և գործառնությունների հիմնական տեսակներն են՝ միջազգային հաշվարկները, դեպոզիտների վարկավորումը և կուտակումը, արտարժույթային գործառնություններ, համաշխարհային ֆոնդային շուկաներում գործառնություններ, թրաստային գործառնություններ, առևտրային ֆինանսավորման գծով ծառայություններ և այլ ծառայություններ:

Կարելի է տարանջատել միջազգային բանկային գործունեության կարգավորման երեք մակարդակ՝ միջազգային, ազգային, և միկրո մակարդակներ (ինքնակարգավորում): Ազգային մակարդակը, անկասկած, համարվում է որոշիչ, քանի որ ինչպես միջազգային այլ բիզնեսների կարգավորման դեպքում, միջազգային համաձայնագրերը ուղղված են ունիֆիկացման և ներդաշնակեցման: Դա նշանակում է ազգային մակարդակում կարգավորման նորմերի և կանոնների մոտեցում, և բանկերի գործունեության ազատականացում, և տարբեր երկրներում նրանց նկատմամբ պահանջների կարգավորում:

Դիտարկվող հարցին վերաբերող ամենակարևոր միջազգային համաձայնագրերից է ԱՀԿ սահմաններում գործող «ԾԱԳՀ-ի ֆինանսական ծառայությունների հավելվածը», մի համաձայնագիր որը պատրաստվել է Բանկային վերահսկողության բազեյան կոմիտեի կողմից: Կան նաև Եվրոպական միության շրջանակներում գործող մի շարք այլ հրահանգներ և ձեռնարկներ, որոնք ուղղված են բանկային համակարգերի միավորմանը:

ԾԱԳՀ-ի ֆինանսական ծառայությունների հավելվածը ներառում է մի քանի հիմնական սկզբունքներ՝ ֆինանսական ծառայությունների առևտրի ազատականացում, առավել բարենպաստման ռեժիմի ապահովում, վեճերի կարգավորում բանակցությունների միջոցով, պայմանավորվածություններից հրաժարման հնարավորություն՝ եթե դրանք վտանգում են երկրի ֆինանսական համակարգի միասնությանն ու ստաբիլությանը, խախտում են ներդրողների, ավանդատերերի և այլ անձանց իրավունքները:

Միջազգային ֆինանսական գործունեության և մասնավորապես բանկային գործունեության ազատականացման համար դրված նպատակը իրականացվում է ԱՀԿ անդամ երկրների կողմից ազգային շուկաներ մուտքի սահմանափակումների քայլ առ քայլ կրճատման և վերացման ճանապարհով: Այս ոլորտում սահմանափակումների ամենատարածված տեսակներն (կարգավորման հիմնական գործիքներն) են համարվում՝ իրավաբանական անձանց սահմանափակումը ըստ տեսակների, օրինակ՝ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գործունեության արգելքը, օտարերկրյա կապիտալի մասնակցության սահմանափակումը՝ երբ սահմանվում է օտարերկրյա կապիտալի մաքսիմալ տոկոսային բաժինը երկրի համախառն բանկային կապիտալում, օտարերկրյա ծառայություններ մատուցողների բանակական սահմանափակում, լիզենզավորման յուրահատուկ պահանջներ, գործառնությունների ընդհանուր արժողության կամ օտարերկրյա բանկերի ակտիվների վրա քվոտաներ և այլն:

Բացի դրանից, ԱՀԿ անդամ պետությունները, համաձայնագրին հետևելով, ձգտում են ֆինանսական ծառայությունների շուկաները ապամոնոպոլացնել: Ծառայությունների առևտրի կարգավորման ոլորտում նկատվում է երկակի ստանդարտների միտում, զարգացած երկրները առավել հետաքրքրված են ուրիշ երկրների, այլ ոչ թե իրենց սեփական ֆինանսական շուկաների ազատականացման մեջ: Օրինակ՝ ԱՄՆ առանձին նահանգների օրենսդրությունը արգելում է օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գործունեությունը, երբեմն օտարերկրյա բանկային հաստատություններին արգելվում է ԱՄՆ բաղաբաժնիներից ավանդներ ընդունել:

Միջազգային բանկային գործունեության կարգավորման գործում մեծ դեր են խաղում նաև Բազելյան համաձայնագրերը: Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն ստեղծվել է 1975թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում: Նրա ստեղծումը միջազգային հանրության արձագանքն էր այն ժամանակվա խոշոր բանկերից մեկի՝ արևմտագերմանական «Բանկհաուս Յերշտատտի» սննկացմանը, որը ցույց տվեց որ վերահսկողության և կարգավորման ազգային մարմինները իրական գործիքներ և մեխանիզմներ չունեն վերազգային բանկերի գործունեությունը կարգավորելու համար: Այդ պատճառով կարիք առաջացավ ձևակերպել առաջին հերթին ստանդարտ պահանջներ տարբեր երկրներում միջազգային բանկային գործունեության վրա, և երկրորդ հերթին պայմանավորվել ՎԱԲ-երի ողջ ցանցի գործունեության վրա վերահսկողության իրական սկզբունքների մասին, ինչպես նաև վերացնել միջազգային ֆինանսական գործառնությունների վրա պետությունների մասնակի վերահսկողությունը: 1975թ. Բազելյան կոմիտեն (ԲԿ) պատրաստել է օտարերկրյա բանկային հաստատությունների վերահսկողության մասին մի հաշվետվություն, որը հետագայում ստացավ Կոնկորդատ 1975թ. անվանումը: Չնայած ԲԿ այդ և հետագա փաստաթղթերի խորհրդատվական բնույթին, դրանց դրույթները արդեն փոխանցված են ազգային բանկային օրենսդրությունների մեջ:

1975թ. Կոնկորդատը ներառում էր հետևյալ դրույթները.

- Օտարերկրյա բանկային հաստատության գործունեության վրա վերահսկողությունը գտնվում է ծագման պետության և տեղակայման պետության համապատասխան մարմինների համատեղ իրավասության ներքո:

- Որևիցե բանկային հաստատություն հսկողությունից չպետք է խուսափի:

- Լիկվիդայնության նկատմամբ հսկողությունը գտնվում է տեղակայման երկրի մարմինների իրավասության ներքո:

- Վճարունակության նկատմամբ հսկողությունը գտնվում է ծագման երկրի մարմինների իրավասության ներքո, եթե գործ ունենք օտարերկրյա բանկի մասնաճյուղի հետ, իսկ եթե գործ ունենք դուստր բանկի հետ, ապա հսկողությունը գտնվում է տեղակայման երկրի մարմինների իրավասության ներքո:

- Ծագման և տեղակայման երկրների պետական մարմինների միջև մշտապես տեղի է ունենում համապատասխան տեղեկատվության փոխանակում:

1975-ի Կոնկորդատը 1983թ. համալրվել է ևս մեկ կետով՝ բանկային հոլդինգների գործունեության նկատմամբ կոնտրոլիցված վերահսկողություն: 1992թ. Բազելյան Կոնկորդատի մեջ հայտնվեցին նոր միևնույն ստանդարտներ, միջազգային բանկային խմբերը և դրանց անդրսահմանային հաստատությունները վերահսկելու նպատակով: Դրանք նախատեսում են տեղակայման և ծագման երկրների մարմինների փոխադարձ համաձայնություն վերազգային բանկային հաստատությունների ստեղծման համար, ինչպես նաև դրանց իրավունքներին և պարտավորություններին վերաբերող այլ դրույթներ:

ՎԱԲ-երի գործունեության միջազգային կարգավորման մեջ մեծ դեր են խաղում ԲԿ կողմից մշակված գործունեության ունիվերսալ նորմատիվները, որոնք ներառված են ազգային բանկային օրենսդրության մեջ: Այդ նորմատիվների ամենակարևորն է բանկի կապիտալի բավարարության նորմատիվը:

Բանկի կապիտալի միասնական սահմանումը, ըստ տարբեր տեսակների ակտիվների ռիսկերի գնահատման համակարգը, կապիտալի հաշվարկման բանաձևը և կապիտալի բավարար չափը ներառվել են 1988-ի «Բազել I» համաձայնագրի մեջ: 2004թ. ընդունվել է կապիտալի բավարար չափի և դրա գնահատման մեթոդիկայի մասին «Բազել II»-ը համաձայնագիրը: 2010թ. սեպտեմբերի 12-ին ընդունվել է բանկային ակտիվների կառուցվածքի և որակի մասին նոր նորմերի և ստանդարտների հավաքածու, որը ստացավ «Բազել III» անվանումը: Համաձայն նոր և ավելի կոշտ ստանդարտների, բանկի սեփական կապիտալի լիկվիդային պահուստի միևնույն չափը աճել է մինչև 4,5%: Մինչ այդ, այդ թիվը կազմում էր 2%: Պահուստների կառուցվածքի նոր չափանիշը բանկերի կողմից պետք է իրագործվի մինչև 2019թ. հունվարի 1-ը:

Օգտագործված գրականություն

1. Симонов Ю.Ф., Носко Б.П., Валютные отношения, Учебное пособие для вузов, с.136, Ростов-н/Д., Феникс, 2001
2. Falk R., Predatory Globalization, Oxford, DDD, 2004, p.23-25
2. Мировая экономика и международный бизнест, В.В. Полякова, Р.К. Щенина, Москва 2008г., с. 527
2. Соколинский В.М., Корольков В.Е. и др., Экономическая теория, Под.ред. А.Г. Грязновой и В.М. Соколинского, М., КНОРУСС, 2006, с. 421-422

Ներկայացվել է 10.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.